
80

Մեր ուսումնարանը 80 տարեկան է… Եվ ասվում է, որ ոչ թե գեղեցիկ խոսքի համար, այլ փաստի իրական նշանակությունը ընդգծելու նպատակով: Այո, Երևանի պարարվեստի պետական ուսումնարանը, խմբակներ, բախտորոշ նշանակություն ունի Հայաստանի բալետի արտիստների պատրաստման բարձրակարգ համար, և այդ կրթօջախի իրական վիճակն է արտացոլել մեր երկրի զարգացման ընթացքում պահերին:

90-ական թվականների սկզբին՝ մութ, ցուրտ և կիսասոված տարիներին, ուսումնարանը կործանումից փրկելը հերոսություն էր, և այդ բառիս բուն իմաստով սխրանքը գործեց ուսումնարանի կոլեկտիվը՝ տնօրեն **Թերեզա Գրիգորյանի** ղեկավարությամբ: Թող Աստված լուսավորի նրա հոգին:

Շնորհիվ այդ փորձությունների ուսումնարանը դուրս եկավ ավելի տոկուն, ասես մոխիրներից հառնած փյունիկ, ծառայելով ամենագեղեցիկ արվեստին՝ բալետին…

Հենց այդ տարիներին կոփվեցին և միջազգային ասպարեզ մտնելով նվաճեցին մեր փայլուն տղաները, որոնք այսօր «զարդել են» Եվրոպայի անվանի թատրոնների բեմերը:

Պարարվեստի ուսումնարանի ստեղծման պատմությունը, ըստ իս, պայմանականորեն բաժանվում է երեք փուլի՝ կազմավորման, կայացման և ճանաչման, որոնցից կարևորագույնը երկրորդն է: Կազմավորման շրջանի սկիզբները, առանց երկար փնտրտուքների, կարելի է գտնել 1924 թվականին, երբ **Վահրամ Արիստակեսյանը** բացեց Երևանում պարարվեստի սիրողական ստուդիա: Մի անհերքելի փաստ, որը շատ է շահարկվում և ուռճացվում վերջին տարիներին: Դա, անկասկած, պարարվեստի առաջին կրթօջախն էր Հայաստանում և, անկասկած, ոչ պրոֆեսիոնալ: Այդ կրթօջախի ստեղծումը պայմանավորված էր երկու կարևորագույն հանգամանքներով՝ Հայաստանից դուրս: Առաջինը կապված էր ստուդիական շարժման այն հզոր ալիքի հետ, որը 1917 թվականի հեղափոխությունից հետո ողողեց ամբողջ Ռուսաստանը: Մի քանի տարվա ընթացքում Մոսկվայում և Պետերբուրգում բացվեցին հարյուրավոր դպրոցներ և ստուդիաներ, որոնք քարոզում էին 20-րդ դարի սկզբին պարար-

կետի աշխարհում առաջացած նոր խնդիրը՝ ռումինական միջնադեպությունները, անկողմնակալ պարելու և այլն։ Այդ ժամանակաշրջանում բազմազանություններ հանդարտվում էր դասական պարին, որի պատմությամբ մնում էին անկողմնակալ դպրոցները։ Երկրորդ համաշխարհային ճնշումները կապված էր Ռուսաստանի հետ, բալետը արդեն համարվում էր Սովետական Միության համար մեծ արվեստի պարծանքներից, և պարարվեստի զարգացումը համարյա պետական նշանակություն ունեցող նպատակ էր։ Այսպես թե այնպես, դասական պարարվեստը Հայաստանում զարգացավ ռուսների թելադրանքով, ինչի համար մենք երախտապարտ ենք մինչ օրս։

1927 թվականին Երևանում ստեղծվեց ռիթմի և պլաստիկայի ստուդիա, որը ղեկավարում էր **Աննա Գուլբինյանը**։ 1930 թվականին երկու ստուդիաները միավորվեցին և կազմավորվեց ռիթմի, պլաստիկայի և ֆիզկուլտուրայի տեխնիկում, որի ղեկավարման համար Թբիլիսիից հատուկ հրավիրվեց ազգագրական պարերի անզուգական տեսաբան **Սրբուհի Լիսիցյանը**։ Մեկ տարի անց ֆիզկուլտուրան անջատվեց, իսկ 1937 թվականին տեխնիկումը վերանվանվեց պարարվեստի ուսումնարանի։

Նորաստեղծ կրթօջախի առջև կանգնեց հրատապ լուծում պահանջող առաջնահերթ գերխնդիր՝ դասական պարի դասավանդման խորացում և մասնագիտացում։ Առաջին հերթին՝ խոսքը մատների վրա կանգնելու պարի ներմուծման մասին էր։ Պարարվեստի ուսումնարանը պետք է դառնար բալետի դպրոց, իսկ դասական բալետի գաղափարը անգամ ամենահամարձակ ուղեղը և անհամբեր հանդիսատեսը կապում է «ռուսական» համակարգության հետ։ Հայաստանը բազմիցս պարողների խիստ կարիք ուներ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի բալետային խումբը համալրելու համար։ Անվիճելի ճշմարտություն է, որ պարարվեստի աշխարհում պրոֆեսիոնալիզմի միակ չափանիշը եղել է, կա և հավերժ կմնա դասական պարի իմացությունը։

1941 թվականին Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի առաջատար մենակատար **Լյուբով Վոխոնցևա-Շիկանյանը** ավարտեցրեց առաջին աշակերտների դասարանը, որը տիրապետում էր «մատների» տեխնիկային։ Այդ դասարանի լավագույն շրջանավարտը **Թերեզա**

գրիգորյանն էր, որն իր պարընկերոջ՝ **Ազատ Ղարիբյանի** հետ կատարեց գլխավոր դերերը Դելիբի «Կոպելիա» բալետում:

1942 թվականին ուսումնարանն ավարտած երիտասարդ կատարողներից (**Վանուշ Խանամիրյան, Սիլվա Մինասյան, Ֆրունզե Եչաճյան**) բախտ էր վիճակված երկար տարիներ զարդարել հայկական բեմը:

1947 թվականին Երևան ժամանեցին Լենինգրադի պարարվեստի ուսումնարանի շրջանավարտները, որոնք իրենց ճակատագիրը ընդմիշտ կապեցին հայ պարարվեստի հետ: **Լյուդմիլա Սեմանովան** երկար տարիներ դասավանդում էր մեր ուսումնարանում, իսկ **Վիկտոր Բորիսովը** հիմնադրեց «ժողովրդաբնորոշ պարի» առարկայի դասավանդման սկզբունքները:

1959 թվականին **Ազատ Ղարիբյանի** ջանքերով ուսումնարանում բացվեց «ժողովրդական պարի» բաժինը, որը տարբեր տարիներին ղեկավարում էին **Նորայր Խաչատրյանը, Փայլակ Սարգսյանը, Նելլի Կարապետյանը, Հովհաննես Խաչիկյանը**:

Այսպիսով 1950-ական թվականների վերջին ավարտվեց կազմավորման փուլը: Հիմքը դրված էր, սակայն արժանի դասական դպրոց կառուցելը դժվարին խնդիր էր, և տասնամյակներ պահանջվեցին ուսումնարանի կայացման համար:

1950-ական թվականների վերջում երկու ուշագրավ փաստ առանձնանում են իրենց նշանակալի էությամբ:

1959 – 1971 թվականներին ուսումնարանի գեղարվեստական ղեկավարի պաշտոնը զբաղեցնում էր **Մաքսիմ Մարտիրոսյանը,** որի ստեղծագործական ծրագրերի իրականացման շնորհիվ Երևանի բալետային դպրոցը դուրս եկավ համամիութենական ասպարեզ, ըստ որում, ոչ թե որպես ներողամտություն հայցող, ակադեմիական ուսումնարանների կողմից բարեհաճ, բայց բարձրամիտ վերաբերմունքի արժանացող կրտսեր քույր, այլ հավասարը հավասարի հետ մրցելու լիիրավ լիազորությամբ:

1959 թվականին **Մաքսիմ Մարտիրոսյանի** դասարանը ավարտեցին հայ պարարվեստի ականավոր գործիչներ **Վիլեն Գալստյանը, Նորայր Մեհրաբյանը, Աննա Սարիկյանը**: Հայկական բալետի հռչակավոր



Ուսումնարանի տնօրեն
ՀՀ ժող. արտիստուհի
Թերեզա Գրիգորյան



Ուսումնարանի տնօրեն
ՀՀ ժող. արտիստ
Վիլեն Գալստյան



Ուսումնարանի գեղ. ղեկավար
ՌԴ ժող. արտիստ
Մաքսիմ Մարտիրոսյան



Ուսումնարանի գեղ. ղեկավար
ՀՀ Վաստ. արտիստ
Նորայր Մեհրաբյան



Ուսումնարանի
փոխտնօրեն
Հասմիկ Մարկոսյան



Ուսումնարանի գեղ. ղեկավար
ՀՀ ժող. արտիստ
Հովհաննես Պիվանյան

կատարող **Վիլեն Գալստյանը** առաջինն էր, ով հաղթեց Վառնայի միջազգային մրցույթում, և, ինչը ավելի կարևոր էր, առաջինը, ում ուղեցույց աստղը բերեց Մեծ թատրոնի բեմ՝ պարելու Մեծ թատրոնի ներկայացում-ներում Մեծ թատրոնի փառապանծ խմբի հետ: Արդարությունը պահանջում է նշել, որ սովետական տարիներին մեր անծայրածիր պետության գլխավոր թատրոնի բեմը յուրաքանչյուր պարողի բաղձալի երազանքն էր, իսկ Մոսկվայում դրվատանքի արժանանալը շատ ավելի պատվավոր, քան ցանկացած ուրիշ երկրում:

Քանի դեռ Երևանի պարարվեստի ուսումնարանը 1960 – 70-ական թվականներին նախանձելի հաճախականությամբ մասնակցում էր բոլոր համամիութենական ստուգատեսներին՝ ապացուցելով իր կենսունակությունը, պրոֆեսիոնալիզմը և նույնիսկ ակադեմիզմը, **Գալստյանը**՝ որպես կատարող, հանդիսանում էր այդ ակադեմիզմի կենդանի գրավականը և վառ ապացույցը:

**Մաքսիմ Մարտիրոսյանի** օրոք ուսումնարանը հաշվետու համերգով հանդես եկավ Մոսկվայի Կրեմլի պալատում (1964թ.), բարձր վարկանիշ վաստակեց Մոսկվայի (1969թ.), Կիևի (1972թ.) և Պերմի (1972թ.) սեմինարներում և ստացավ մրցանակ Լենինգրադի «Սպիտակ գիշերներ» փառատոնի ժամանակ: Ուսումնարանում բացահայտվեց **Մարտիրոսյանի** ոչ միայն բացառիկ մանկավարժական օժտվածությունը, այլ նաև նրբաճաշակ բալետմեյստերական տաղանդը: Նա բեմադրեց տասնյակ համերգային համարներ՝ մանրապատումներից մինչև խոշոր կտավներ՝ «Հանուն երջանկության» բալետը **Ռ.Դավթյանի** երաժշտությամբ, Շոստակովիչի 9-րդ սիմֆոնիայի խորեոգրաֆիկ մարմնավորումը, Կոմիտասի երաժշտությամբ «Դաս-համերգ» ուսումնարանի 50-ամյակի առթիվ և Դոնիցետիի, Օֆենբախի, Շոպենի, Շտրաուսի երաժշտությամբ «Էտյուդներ» 70-ամյա հոբելյանի կապակցությամբ: 1990-ական թվականներին ուսումնարանի կրտսեր դասարանների աշակերտների ուժերով **Մարտիրոսյանը** ստեղծեց «Պարմանի» մանկական թատրոնը՝ ապացուցելով, որ անգամ փոքրիկ արտիստների մասնագիտական համեստ



ՀՀ ժող. արտիստներ
Թերեզա Գրիգորյան,
Ազատ Ղարիբյան



ՀՀ ժող. արտիստ
Վանուշ Խանամիրյան



ՀՀ ժող. արտիստներ
Սիլվա Մինասյան
Ֆրունզե Ելանյան



ՀՀ ժող. արտիստուհի
Էլվիրա Մնացականյան



ՀՀ ժող. արտիստ
Վիլեն Գալստյան



ՀՀ ժող. արտիստուհի
Լյուդմիլա Սեմանովա
ՀՀ վաստ. արտիստ
Ալբերտ Միքայելյան



Մարինա Միհրանյան և
Ալ.Սպենդիարյանի
անվ. Օպերայի և Բալետի
թատրոնի գլխ.
բալետմեյստեր
Արմեն Գրիգորյան

Մարիա Դիվանյան
Զավեն Հարությունյան



Սան Ֆրանցիսկոյի թատրոնի մենակատար
Դավիթ Կարապետյան



Համբուրգի թատրոնի մենակատար Արսեն Մեհրաբյան



Ցյուրիխի թատրոնի
մենակատար
Արման Գրիգորյան





Թուլուզի թատրոնի
մենակատար
Դավիթ Գալստյան



Ցյուրիխի թատրոնի
մենակատար
Վահե Մարտիրոսյան

Մելքոն Խաչիկյան





Ժակլին Սարխոշյան
Լևոն Համբարձումյան



Սոնա Առուստամյան



ՀՀ ժող. արտիստներ
Էլվիրա Մնացականյան,
Հովհաննես Դիվանյան



ՀՀ ժող. արտիստուհի
Բելլա Հովնանյան
ՀՀ վաստ. արտիստ
Ռուդոլֆ Խաչատրյան



ՀՀ վաստ. արտիստ
Նորայր Մեհրաբյան,
Ալբերտ Անդրեասյան

ՀՀ վաստակավոր արտիստուհի
Աննա Մարտիկյան





ՀՀ վաստակավոր արտիստուհի Նադեժդա Դավթյան

…կատարողությունները արդեն չէին կարող համեմատվել …գեղարվեստական անսահման ֆանտազիայի արտահայտման համար։

1960 – 1970-ական թվականները բեղուն տարիներ էին, երբ թատրոնի պատերից դուրս եկավ մի սերունդ, որը տիկնիկային բեմի «ոսկե դարը»՝ **Էլվիրա Մնացականյան, Յովհաննես** [illegible]յան, **Ռուդոլֆ Խաչատրյան, Սերգեյ Պետրոսյան, Նադեժդա** Դավթյան, **Յովհաննես Խաչիկյան, Ելենա Պավլինի, Սերգեյ Բարանով** և ուրիշներ։

1970-ական թվականներին գեղարվեստական ղեկավար դարձավ **Նորայր Մեհրաբյանը**։ Շարունակվեց թատրոնի կայացման և ինքնահաստատման գործընթացը։

1977 թվականին **Մեհրաբյանը** բեմադրեց Բիզեի «Պատանեկան սիմֆոնիան», իսկ 1981-ին՝ [illegible] «Չոփչոփիկը»։

1978 թվականին թատրոնը արժանացավ բացառիկ պատվի և իրավունք ստացավ մասնակցելու Հայաստանը Ռուսաստանին միավորվելու 150-ամյակին նվիրված համերգին Մեծ թատրոնում։ 1980 թվականը հաջողություններ բերեց Լենինգրադում՝ [illegible] պատվավոր [illegible] անվան ուսումնարանում կազմակերպված [illegible] մասնակից, 1982-ին «Սպիտակ գիշերներ» փառատոնի մասնակից. **Մեհրաբյանի** աշակերտ՝ [illegible] **Արմեն Գրիգորյանը** գրավեց Լենինգրադի բեմադրիչ մասնագետների ուշադրությունը և հրավեր ստացավ ուսումը ավարտելու «Վազգանովկայում»։ 1984 թվականին **Գրիգորյանը** մասնակցեց համամիութենական մրցույթի և արժանացավ դիպլոմանտի կոչման։

1984 թվականին ամփոփելով իր 60-ամյա պատմությունը, թատրոնը հանդիսատեսին ծանոթացրեց լինել դասական խաղացանկի կողմերից մեկի բեմադրությամբ՝ ներկայացնելով Չայկովսկու «Շչելկունչիկ» բալետը։ Իր գոյության ողջ պատմության ընթացքում թատրոնը, գիտակցելով դասական խաղացանկի բացառիկ նշանակությունը երիտասարդ պատանիների կրթության հարցում, [illegible] ներկայացրել է աշխարհի գործողություններ և խոշոր



ՀՀ վաստ. արտիստներ
Ռուզան Սողինյան,
Սուրեն Ակինյան



Մյունխենի թատրոնի
մենակատար
Տիգրան Միքայելյան

ՀՀ վաստակավոր արտիստ Սերգեյ Բարանով





Ուսումնարանի 1994-98թթ. գեղ. ղեկավար
«ՀԺՊ» բանի պարիչ Հովհաննես Խաչիկյան

դրվագներ հանրաճանաչ բալետներից՝ «Ժիզել», «Դոն-Քիշոտ», «Բայադերկա», «Կոպելիա», «Կարապի Լիճը»:

1980 – 90-ական թվականներին գեղարվեստական ղեկավարներ աշխատեցին **Մարատ Մուրադյանը**, **Հովհաննես Խաչիկյանը**, **Թամար Այդինյանը**, **Հովհաննես Դիվանյանը**:

**Դիվանյանի** օրոք սկսվեց մի կարևոր ժամանակաշրջան, որը կարելի է որակել որպես ուսումնարանի միջազգային ճանաչման փուլ:

1990-ական թվականներին ի հայտ եկավ տղաների մի փայլուն սերունդ, որը արեց անհնարինը՝ զարմացրեց Եվրոպան: Վերջին տասնամյակում բալետային աշխարհը ամենուրեք ընդունում է հայ տղաների ֆենոմենը: **Դիվանյանի** և տղաների մյուս դասատուների ուսուցիչների մանկավարժական վարպետությունը տոփեց բալետային քարտեզի վրա նշել փոքրիկ Հայաստանը՝ որպես երիտասարդ պարողների դարբնոց: Այսօր մենք հպարտությամբ խոսում ենք տղամարդկանց պարի հայ կատարողական դպրոցի առանձնահատկությունների մասին՝ առնականություն, հուզականություն, բուռն բնական խառնվածք, իսկ դա մեծ նվաճում է ընդամենը 80 տարվա պատմություն ունեցող ուսումնական հաստատության համար:

1998 թվականին **Տիգրան Միքայելյանը** հաղթեց Լոզանի մրցույթում, 1999-ին նույն մրցույթում հաղթանակի տարավ **Դավիթ Կարապետյանը**: **Արսեն Մեհրաբյանը** և **Արման Գրիգորյանը** դարձան երեքական միջազգային մրցույթների դափնեկիր. **Արսենը**՝ Լոզանում, Պետերբուրգում և Վառնայում, **Արմանը**՝ Թել-Ավիվում, Լոզանում և Վառնայում: Մեծ հաջողությունների հասան **Վահե Մարտիրոսյանը** և **Դավիթ Գալստյանը**:

Այժմ մեր տղաները աշխատում են Ցյուրիխի, Համբուրգի, Շտուտգարտի, Բեռլինի, Մյունխենի, Թուլուզի, Սան-Ֆրանցիսկոյի օպերային թատրոններում:

Այս փոքրիկ նյութը նպատակ չի հետապնդում լուսավորել ուսումնարանի պատմության էջերի բոլոր մանրամասնությունները: Թող ներեն մեզ այն երախտավորները, ում անունները մենք չենք նշել: Ոչ որ մոռացված չէ, չէ՞ որ նրանցից յուրաքանչյուրը գոնե մեկ քար դրել է հայ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ



Մասնագիտական բաժնի վարիչ Ֆարենիկ Ղարիբյան



Արտադրական պրակտիկայի վարիչ Էլենա Սանդարչյան



Նվագակցողների բաժնի վարիչ Անուշ Կարապետյան



Ավագ ուսուցիչ Անուշ Պետրոսյան

<u>Մասնագիտական բաժին</u>

Անուշ Պետրոսյան
Էլվիրա Մնացականյան
Կարինե Վարդանյան
Աննա Մարիկյան
Արմենե Գրիգորյան
Գարուշ Խունկյան
Հրայր Հովհաննիսյան
Աննա Կարապետյան
Հովհաննես Խաչիկյան
Ֆարենիկ Ղարիբյան

<u>Նվագակցողների բաժին</u>

Անուշ Կարապետյան
Մոնա Ալթունյան
Լիանա Մնացականյան
Իդա Հարությունյան
Մարինա Մելկումովա

<u>Հանրակրթական բաժին</u>

Աղոլյա Տեր-Մարտիրոսյան
Թամարա Բարխուդարյան
Անժիկ Եղիազարյան
Մայա Եսայան
Կլիոնեկ Սվետլանա

բովանդակային արտահայտման դպրոցի [illegible]։ Եվս մեկ անգամ խոնարհվենք նրանց առջև՝ **Վահրամ Արիստակեսյան, Աննա Դուրինյան, Սոֆյա Լիսիցյան, Դմիտրի Կարասով, Վլադիլեն Բալյան, Սիլվա Սեփինյան**, Ռուսաստանի Դաշնության ժողովրդական արտիստ **Մարիամ Մարտիրոսյան**, Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստներ **Ջեննա Գրիգորյան, Աղասի Ղարիբյան, Վանուշ Խանամիրյան, Լյուդմիլա Սեմյոնովա, Ֆրունզե Եվանյան, Վիլեն Գալստյան, Բելլա Հովնանյան, Էլվիրա Մնացականյան, Հովհաննես Դիվանյան**, արվեստի վաստակավոր գործիչ **Զարեհ Մուրադյան**, վաստակավոր արտիստներ **Սերգեյ Սարկիսով, Նորայր Մեհրաբյան, Աննա Մարիկյան, Վիկտոր Բորիսով, Մարատ Մուրադյան, Նադեժդա Դավթյան**, վաստակավոր ուսուցիչներ **Ալեքսանդրա Բագանկովա, Դինա Գացինա, Նորայր Խաչատրյան, Սիլվա Հովնանյան, Ելենա Սամարդաշյան, Լյուսյա Կոստանյան**, ուսուցիչներ՝ **Պավլինե Փուռնազյան, Սեդա Հակոբջանյան, Ռիմա Խաչիկյան**։

Նրանք, ովքեր արդեն չկան, թողել են հավերժ հիշատակ, նրանց, ովքեր ողջ են, մեր հավերժ երախտագիտությունը։

**Հեղինակ՝ Հասմիկ Մարկոսյան**

